ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 180

<<10>> հունիսի 2020 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի ԹԻՎ 140 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով և հիմք ընդունելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1460 հրամանը. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի աղետների ռիսկի կառավարման 2020 թվականի պլանը՝ համաձայն N՝ 1-6 հավելվածների

2.Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանի N 6 հավելվածով նախատեսված՝ նվազագույնը երեք միջոցառում իրականացնելու դեպքում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

3.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի 2020 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքում աղետների ռիսկի կառավարման խորհուրդ ստեղծելու մասին» թիվ 140 որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

10.հունիսի.2020 թվական
Գյուղ Մայիսյան